

## «Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին»

### ՀՀ օրենքի կիրառության վերաբերյալ սովորույթը



Համաձայն «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի (հոդված 14, 3-րդ կետ)՝ Հաշտարարին իրավունք է վերապահվում որոշում կայացնելիս ՀՀ օրենսդրության պահանջներից բացի հաշվի առնել նաև գործարար վարքագծի և էթիկայի կանոնները, գործարար շրջանառության սովորույթները:

Ֆինանսական համակարգի հաշտարարին ներկայացված պահանջ-դիմումներից մեկի քննության շրջանակում անհրաժեշտություն է առաջացել պարզելու Բանկերում ձևավորված պրակտիկան «Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենքի կիրառության վերաբերյալ:

Համաձայն ներկայացված պահանջի՝ Հաճախորդի և Բանկի միջև կնքվել է Վարկային, կոշտ գրավի և բանկային հաշվի բացման պայմանագիր, համաձայն որի՝ Հաճախորդին տրամադրվել է սպառողական վարկ: Պայմանագրի համաձայն՝ վարկի գումարի և հաշվարկված տոկոսների մարումն իրականացվում է անուիտետային եղանակով: Պայմանագրով սահմանվել է պայման, համաձայն որի՝ Հաճախորդը Բանկին տալիս է հանձնարարագիր՝ իր բանկային հաշվին կատարված մուտքագրումներն ուղղելու Բանկի հանդեպ նշված պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարմանը: Հաճախորդը մեկ այլ բանկի միջոցով փոխանցում է կատարել իր բանկային հաշվին՝ գործարքի նպատակ նշելով «Վարկի լրիվ մարում»: Փոխանցման անդորրագրում, որպես ստացող բանկ նշվել է Բանկը, որից Հաճախորդը ստացել է վարկի գումարը: Ի կատարումն Հաճախորդի վճարման հանձնարարականի, այն ստացած բանկը մեմորիալ օրդեր է ուղարկել Հաճախորդի հաշիվը սպասարկող Բանկին, որտեղ որպես փոխանցման նպատակ նույնպես նշել է «Վարկի լրիվ մարում»: Հաճախորդի հաշիվը սպասարկող Բանկը (Բանկը, որից Հաճախորդը ստացել է վարկի գումարը) Հաճախորդի հաշվին մուտքագրված ամբողջ գումարը կրեդիտագրել է Հաճախորդի բանկային հաշվին, սակայն ամբողջությամբ չի ուղղել վարկի մարմանը, այլ ուղղել է անուիտետային եղանակով: Հաճախորդի հաշիվը սպասարկող Բանկը նշել է, որ հաճախորդի վճարման հանձնարարականն ուղղված է Վճարողի Բանկին ու Շահառուի Բանկը իրավունք չունենալով այդ հանձնարարականի հիման վրա Հաճախորդի բանկային հաշվին կրեդիտագրված գումարն ամբողջությամբ ուղղել վարկի մարմանը:

Բացի այդ, Հաճախորդի հաշիվը սպասարկող բանկը նաև չի ապահովել «Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ Օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված պահանջը, համաձայն որի՝ շահառուի բանկը պարտավոր է տեղեկացնել (բանավոր, գրավոր կամ էլեկտրոնային եղանակով) շահառուին վճարման հանձնարարականի ստացման մասին մինչև վճարման օրվան հաջորդող օրացուցային օրվա սկիզբը:

Պահանջի քննությունն իրականացնելու համար Ֆինանսական համակարգի հաշտարարին անհրաժեշտ էր պարզել «Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենքի կիրառության վերաբերյալ Բանկերում ձևավորված պրակտիկան՝ անդրադառնալով հետևյալ հարցերի պարզաբանմանը.

- *Բանկը (որպես Շահառուի բանկ հանդես գալու դեպքում) արդյո՞ք կատարում է Ուղարկողի կողմից Վճարողի բանկին տրված վճարման հանձնարարականի նպատակը (վճարման հանձնարարականի նպատակ դաշտը արդյո՞ք պարտադիր է Շահառուի բանկի համար): Օրինակ, եթե անձը վճարման հանձնարարական է տալիս A բանկին, որով հանձնարարում է փոխանցել որոշակի գումար B բանկում իր ունեցած հաշվին և նշում է, որ փոխանցման նպատակը B բանկից ստացած վարկի ամբողջական մարումն է, ապա B բանկը, արդյո՞ք պարտավոր է հաճախորդի հաշվին փոխանցված գումարն ուղղել Հաճախորդի վարկի ամբողջական մարմանը:*
- *Բանկը (որպես Շահառուի բանկ հանդես գալու դեպքում) արդյո՞ք տեղեկացնում է (բանավոր, գրավոր կամ էլեկտրոնային եղանակով) շահառուին վճարման հանձնարարականի ստացման մասին մինչև վճարման օրվան հաջորդող օրացուցային օրվա սկիզբը:*

Հարցի կապակցությամբ Հաշտարարի գրասենյակը ստացել է ՀՀ-ում գործող տասը Բանկերի կողմից տրված բացատրություններն ու պարզաբանումները, որոնց ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ Բանկային պրակտիկան «Վճարման հանձնարարականով միջոցների փոխանցումների մասին» ՀՀ օրենքի կիրառության վերաբերյալ հետևյալն է.

1. *Վերոնշյալ տասը Բանկերից հինգը կատարում են Ուղարկողի կողմից Վճարողի բանկին տրված վճարման հանձնարարականի նպատակը, իսկ մնացած հինգը չեն կատարում:*
2. *Վերոնշյալ տասը Բանկերից երկուսը տեղեկացնում է շահառուին վճարման հանձնարարականի ստացման մասին մինչև վճարման օրվան հաջորդող օրացուցային օրվա սկիզբը, իսկ մնացած ութ բանկերը չեն կատարում:*